Ժամանակակից հակաբեղմնավորման միջոցների հասանելիությունը Հայաստանում

փաստաթերթ

Սույն փաստաթերթը պատրաստվել է «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ-ի Շահերի պաշտպանության և քաղաքականության մշակման թիմի կողմից: Այն նախատեսված է պետական գերատեսչությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համար, որոնք իրականացնում են այս ոլորտում շահապաշտպան գործունեություն, այդ թվում՝ օրենսդրական նախաձեռնություններ: Փաստաթերթի հիմքում դրված է իրավունքահեն և փաստերի վրա հիմնված մոտեցումը:

Ժամանակակից հակաբեղմնավորման միջոցների կիրառելիությունը

Ժամանակակից հակաբեղմնավորման միջոցներից Հայաստանում տարածված են տղամարդու պահպանակները, ներարգանդային պարույրը, հորմոնային դեղահաբերը, ներարկվող հակաբեղմնավորիչները և սերմնասպան միջոցները: Հայաստանում կան ժամանակակից հակաբեղմնավորիչների նաև այլ տեսակներ, սակայն վերոթվարկվածներն առավել տարածվածն են: Առկա են նաև շտապ բեղմնականխման հաբերը: Ներարգանդային պարույրից բացի, մնացած տեսակները վաճառվում են Հայաստանի դեղատներում, հարկ է նաև նշել, որ հորմոնային հաբերը վաճառվում են միայն բժշկի դեղատոմսով: Համաձայն ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի անցկացված հետազոտության, 2022թ. հարցման մասնակից և՛ կանանց, և՛ տղամարդկանց, ովքեր երբևէ ամուսնացած են եղել կամ սեռական հարաբերություններ են ունեցել,տրվել է «Դուք և Ձեր ամուսինը/կինը երբևէ օգտագործե՞լ եք ժամանակակից բեղմնականխման միջոցներ» հարցը, ինչի արդյունքում պարզվել է, որ կին հարցվողների 50%-ը, իսկ տղամարդ հարցվողների 54%-ը երբեք չեն օգտագործել ժամանակակից բեղմնականխման միջոցներ[1]: Այս տվյալներն, ինչպես նաև «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ-ի փորձը վկայում է, որ կանայք հիմնականում շարունակում են օգտվել ավանդական հակաբեղմնավորման միջոցներից, մասնավորապես՝ ընդհատված սեռական հարաբերությունների մեթոդից, որը հուսալի մեթոդ չէ:

Համաձայն Սեռական և վերարտադրողական իրավունքների եվրոպական խորհրդարանական համաժողովի հրապարակած «Հակաբեղմնավորման քաղաքականության ատլաս 2026»-ի տվյալների[2], եվրոպական 47 երկրների շարքում Հայաստանը գնահատվել և տեղակայվել է «կարմիր գոտում», ինչը նշանակում է, որ Համաձայն Սեռական և վերարտադրողական իրավունքների եվրոպական խորհրդարանական համաժողովի հրապարակած «Հակաբեղմնավորման քաղաքականության ատլաս 2026»-ի տվյալների[1], եվրոպական 47 երկրների շարքում Հայաստանը գնահատվել և տեղակայվել է «կարմիր գոտում», ինչը նշանակում է, որ երկրում առկա է ժամանակակից հակաբեղմնավորման միջոցների, ընտանիքի պլանավորման իրավունքահեն խորհրդատվության և առցանց փաստահեն տեղեկատվության հասանելիության զգալի բացեր, ինչպես նաև պետական ֆինանսավորման և ծառայությունների մատչելիության խնդիրներ: Արդյունքները ընդգծում են համապարփակ քաղաքականության բարեփոխումների անհապաղ անհրաժեշտություն՝ եվրոպական չափանիշներին համապատասխան հակաբեղմնավորման միջոցների արդար, իրավունքների վրա հիմնված հասանելիությունն ապահովելու համար:

Հակաբեղմնավորիչների հասանելիությունն ապահովող օրենսդրությունը և միջազգային չափորոշիչները

«Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) համաձայն՝ յուրաքանչյուր կին ունի անվտանգ մայրության և անցանկալի հղիությունից ու հղիության արհեստական ընդհատումից խուսափելու նպատակով բեղմնականխման արդյունավետ միջոցներից և (կամ) մեթոդներից օգտվելու իրավունք: Առողջապահական ծառայությունները հավաստի տեղեկատվություն են տրամադրում բեղմնականխման առկա միջոցների և մեթոդների ապահովության, արդյունավետության և անվտանգության վերաբերյալ՝ պտղաբերության կարգավորման իրազեկված ընտրություն կատարելու նպատակով: Առողջապահական ծառայություններում պտղաբերության կարգավորման միջոցների և (կամ) մեթոդների ընտրությունը հիմնվում է անձի (կնոջ կամ տղամարդու) վերարտադրողական պատմության, առողջական վիճակի, տարիքի, անհատական առանձնահատկությունների ու նախապատվությունների վրա, իսկ կիրառումն իրականացվում է միայն անձի լիակատար, ազատ և գիտակցված համաձայնությամբ:

Մարդու իրավունքների միջազգային շրջանակի համաձայն՝ պետությունները պարտավորեն կանանց տրամադրել հակաբեղմնավորիչ միջոցների լայն շրջանակի հասանելիություն:

**

[1] Տես, https://armenia.unfpa.org/sites/default/files/pub-pdf/anptghowtyown_hashvetvowtyown_unfpa_final_04.05.pdf

[2] Տես, https://www.epfweb.org/sites/default/files/2026-02/CCInfoEU_A3_EN_2026_FEB22-HiRes.pdf

Պետության այս պարտավորությունն արմատացած է կնոջ կողմից երեխաների թվաքանակի ու ժամանակաշրջանը որոշելու իրավունքի, առողջության իրավունքի, իրավահավասարության իրավունքի և գաղտնիության իրավունքի վրա: Մատչելի, ընդունելի և լավ որակի հասանելիությունը հակաբեղմնավորիչ միջոցներին և ծառայություններին՝ զերծ հարկադրանքից, խտրականությունից և բռնությունից, շատ կարևոր երաշխիք է գենդերային հավասարության տեսանկյունից[3]:

Հակաբեղմնավորիչների հասանելիության և մատչելիության խոչընդոտները

Չնայած ներպետական օրենսդրությունը և մարդու իրավունքների միջազգային նորմերը հստակ նշում են հակաբեղմնավորիչների հասանելիության կարևորության, ինչպես նաև պետության կողմից այդ միջոցների անվճար տրամադրման մասին, կանայք շարունակում են բախվել հասանելիության և մատչելիության բազմաթիվ խոչընդոտների՝ հակաբեղմնավորիչ միջոցներ ձեռք բերելու և օգտագործելու ճանապարհին: Հիմնական խոչընդոտներից է համեմատաբար ավելի մատչելի և հասանելի տեսակի՝ տղամարդկանց պահպանակների օգտագործման խարանը տղամարդ զուգընկերների կողմից: Հայաստանում կանանց տղամարդ զուգընկերները հրաժարվում են պահպանակ օգտագործելուց, ինչի արդյունքում վտանգի տակ են դնում կնոջ առողջությունը, ոչ միայն անցանկալի հղիություն ունենալու տեսանկյունից, այլ նաև սեռական ճանապարհով փոխանցվող վարակների, այդ թվում՝ ՄԻԱՎ ձեռք բերելու տեսանկյունից:

Մեկ այլ խոչընդոտ է ժամանակակից հակաբեղմնավորման միջոցների համեմատաբար բարձր արժեքը: Հայաստանում ժամանակակից հակաբեղմնավորման միջոցները ներառված չեն Առողջության համընդհանուր ապահովագրությամբ փոխհատուցվող ծառայությունների ցանկում: Հատկապես, գյուղաբնակ կանանց համար սա լուրջ մարտահրավեր է, նաև դեղատների և հիվանդանոցների բացակայությունը գյուղաբնակ համայնքներում, որտեղից նրանք կարողեն ձեռք բերել ժամանակակից հակաբեղմնավորիչները: Փոքր համայնքներում լուրջ խոչընդոտ է նաև գաղտնիության պահպանման իրավունքի երաշխավորումը բժիշկների կամ դեղատան աշխատակիցների կողմից. կանայք կաշկանդված են զգում քննարկել հակաբեղմնավորիչների կիրառման հնարավորությունները բժիշկների հետ՝ մի կողմից առկա կարծրատիպերի և ամոթի պատճառով, մյուս կողմից՝ գաղտնիության խախտման: Լուրջ խոչընդոտ է նաև հակաբեղմնավորիչների վերաբերյալ հիմնավոր տեղեկատվության բացակայությունը: Ժամանակակից հակաբեղմնավորիչների օգտագործման վերաբերյալ փաստահեն տեղեկատվության բացակայության և խարանի արդյունքում, շատ կանանց մոտ կա սխալ և թերի տեղեկատվություն ժամանակակից հակաբեղմնավորիչ միջոցների վերաբերյալ: Համապարփակ և իրավունքահեն սեռական կրթության բացակայությունը Հայաստանում, նպաստում է կանանց շրջանում ժամանակակից հակաբեղմնավորիչ միջոցների արդյունավետ կիրառման վերաբերյալ տեղեկացվածության ցածր մակարդակին: Հակաբեղմնավորիչ միջոցները և տեղեկատվությունը հասանելի և մատչելի չեն կանանց տարբեր խմբերի համար, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող, լեսբի, ՄԻԱՎ-ով ապրող, գյուղաբնակ կանանց համար:

Առաջարկներ

- Ներառել ժամանակակից հակաբեղմնավորիչ առնվազն երեք միջոց (ներարգանդային պարույր, պահպանակներ, հորմոնալ հաբեր) Առողջության համընդհանուր ապահովագրությամբ փոխհատուցվող ծառայությունների և դեղորայքի ցանկում:
- Ապահովել ժամանակակից հակաբեղմնավորիչ միջոցների վերաբերյալ տեղեկատվության և ծառայությունների մատչելիությունը կանանց տարբեր խմբերի համար:
- Ներդնել համապարփակ և իրավունքահեն սեռական կրթություն հանրակրթական դպրոցներում:
- Իրազեկել հանրությանը ժամանակակից հակաբեղմնավորիչների կիրառման և արդյունավետության մասին, այդ թվում՝ բժիշկների, հանրային առողջապահական արշավների և այլ ձևերի ու օղակների միջոցով:

[3] Տես, https://www.unfpa.org/resources/rights-contraceptive-information-and-services-women-and-adolescents